ՊՈՆՏՈՍԻ ՄԻՀՐԴԱՏ VI ԵՎՊԱՏՈՐ ԹԱԳԱՎՈՐԸ ՆԱԵՎ ՀԱՅՈՑ ԱՐՔԱ

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայոց Պատմահայր Մովսես Խորենացին մի հետաքրքիր տեղեկություն է պահպանել այն մասին, որ հայոց Արտաշես թագավորը «...հրաման տայ ...զօր յարուցանել յարևելից և ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչև ոչ դիտել նմա զհամարն, այլ յանցս և յիջևանս քար ըստ մարդաթուի կարկառ նշան բազմութեանն թողուլ: Եւ խաղայ այնուհետև յարևմուտս, և ձերբակալ առնէ զԿրիւսոս թագաւոր Լիւդացւոց:

Եւ դտեալ յԱսիայ զղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգեն Վահունեաց՝ զԱպողոնին և զԱրտեմիդեայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր ի Սկիւղեայ և ի Դիպլինոսէ կրետացւոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ յետ մահուանն Արտաշիսի:

Բայց Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս: Քանզի մեծ յոյզք խռովութեանց եղեալ ի Հռովմ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս: Այլ ոչ դիտեմ ասել յորպիսի ազգմանէ, ահագին իմն աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ, իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, թագաւորեալ ամս քսան և հինգ:

Բայց յելլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփեստու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զբօթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին զհետ լինելով, դադարեն առ նոսա»[1]:

Այս հակասություններով լեցուն հաղորդումը, որտեղ խոսվում է հայոց Արտաշես թագավորի, լյուդիական արքա Կրյուսոսի կամ Կրեսոսի, Հռոմում տեղի ունեցած խռովության ու շփոթության, ինչպես նաև Հելլադայից բերված արձանները Դարանաղյաց դավառի Անի ամրոցում հաստատելու մասին, տարբեր մեկնաբանությունների ու բացատրությունների տեղիք է տվել: Որքան էլ զարմանալի թվա, այս հաղորդման վրա առաջինն ուշադրություն է դարձրել հենց ինքը՝ Պատմահայրը, որը ոչ միայն հիշյալ տեղեկություններն արտացոլել է իր աշխատության մեջ, այլև մի

---

[1] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. ԺԲ:*

ամբողջ գլուխ է նվիրել Արտաշեսի աշխարհակալության և Կրեսոսին ձերբակալելու հետ կապված այլ պատմագիրների վկայություններին: Պատմիչի խոսքերով, հունաց պատմագիրներից ոչ թե մեկը կամ երկուսը, այլ շատերը հավաստում են այդ մասին ստիպելով իրեն հարցը մանրազնին քննարկել տարակույսների պատճառով, քանի որ «...լուաք ի պատմութեանց ոմանց՝ Կիւրոսի սպանեալ զԿրիւսոս և բարձեալ զթագաւորութիւնն Լիւգացւոց»[2]: Խորենացու հաշվարկներով, Կրեսոսի գահակալության շրջանը «...երկերիւր ամաւ յառաջ քան զՆեքտանեբայն», իսկ Նեքտանեբոսի ժամանակը՝ «...աւելի ևս երկերիւր ամաւ յառաջ քան զառաջնոյն Արտաշիսի թագաւորի Հայոց»[3], չնայած այլ տվյալներով Կրեսոսը և Նեքտանեբոսը՝ Եգիպտոսի վերջին թագավորը, ժամանակակիցներ են[4]: Չնայած այս ամենին, ինչպես կրկին հավաստում է Պատմահայրը, շատ այլ հեղինակների համաձայն, հայոց Արտաշես թագավորն է բռնել Կրեսոսին և այդ այնպես հավաստի է պատմվում, որ ինքը համոզվում է դրա ճշմարտացիության մեջ: Եվ որպեսզի իր ասածը սոսկ հայտարարություն չհնչի, նա տարբեր հեղինակներից բերում է մի քանի հաղորդումներ: Այսպես, ըստ Պոլիկրատեսի, պարթև Արտաշեսը նրա համար ավելի բարձր է, քան Ալեքսանդր Մակեդոնացին, քան «...զի կալով յիւրում աշխարհին՝ իշխեաց Թեբայ և Բաբելոնի, և չև ընդ Ալիւս գետ անցեալ՝ զլիւդականն սատակեաց զօրս, և կալաւ զԿրիւսոս. և յառաջ քան յԱսիայ հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ: Աւաղ բախտին. միայն թէ ի տերութեանն և ոչ ի փախստեան էր վախճանեալ»[5]: Մոտավորապես նմանատիպ տեղեկություն է բերում Խորենացին Եվագարոսից. «Փոքր Ալեքսանդրի և Դարեհի պատերազմն առ Արտաշիսի բաղդատեալ. քանզի նոցայն ոչ ի փոչոյն մաքուր երևէր լոյս տուրնջեանն. այլ սա ծածկեաց նետաձգութեամբն և ստուերացոյց զարեգակն, ձեռագործ գիշեր զմիջօրեիւ արարեալ: Ոչ փախստեայ՝ համբաւաբեր Լիւդացւոցն թողեալ, այլ և զթագաւորն նոցին զԿրիւսոս ի տապակի հրամայեաց կացուցանել: Վասն սորա և ոչ ուղիք զգետն ստուարացուցին, արբմամբն ի ձմեռնային նուազութիւն իջուցանելով. վասն զի և զթուոցն եցոյց տկար լինել՝ բազմութեամբ զօրացն, մինչ զի չափոյ պէտք ելեն առաւել քան զհամարոյ: Նա ընդ այս ոչ հպարտացաւ, այլ արտասուեաց ասելով. «Աւաղ փառացս անցաւորի»»[6]: Բերված տեղեկություններից շատ չեն տարբերվում Սկամանդրոսի և Փղեգոնիոսի հաղորդումները, որոնք նույնպես տեղ են գտել Պատմահոր շարադրանքում[7]: Դրանց մենք դեռ կանդրադառնանք շարադրանքի ընթացքում, այժմ միայն մեջբերենք Փղեգոնիոսի այն տեղեկությունը, թե Պարթև Արտաշեսը «...մեծամեծ յազթանակօք պանծացեալ՝ ի յիւրոյ զօրացն խողխողի»[8]:

Մեծն Խորենացին, որ միշտ պատրաստակամ է հայերի սխրագործութ-

---

[2] Նույն տեղում, գիրք Բ, գլ. ԺԳ:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:

յուններին վերաբերող իրադարձություններին հավատալու, ի վերջո գալիս է այն եզրակացության, թե «Արդ ես հաւատարմութեան արժանի համարիմ դայսոսիկ պատմութիւնս. և զայն Կրիւսոս, որ առ Կիւրոսիւ և կամ Նեքտանեբաւն պատմին, կամ սուտ լեալ և կամ միով անուամբ բազում թագաւորաց վարեալ, որպէս յոլովից է սովորութիւն»[9]: Չնայած Քերթողահայր Մովսեսի այն ճիշտ մտքին, որ միևնույն անունով շատ թագավորներ են կոչվել և այդ կարող էր շփոթի պատճառ դառնալ, այնուամենայնիվ, նրա եզրակացությունն այն հարցում, թե Կրեսոսի Կյուրոսին ժամանակակից լինելը թերևս սուտ է, հեռու է իրականությանը համապատասխանելուց: Բոլորովին էլ չկասկածելով Խորենացու կողմից սկզբնաղբյուրներին հարազատ մնալու իրողությանը, այնուամենայնիվ, ցավոք սրտի, ստիպված ենք արձանագրել, որ չնայած հիշյալ հեղինակների իրական անձնավորություն լինելու հանգամանքին, Պատմահոր բերած հատվածները չեն պահպանվել իրենց բնագրերով: Հետևաբար, եթե հաշվի առնենք նրա պրպտուն միտքը և ամեն մի տեղեկություն իր ուղեղի բովով անցկացնելու նրա հակումը, ապա հնարավոր է, որ բերված հատվածներն, այնուամենայնիվ, ինչ-որ չափով կորցրել են իրենց անաղարտությունը: Համենայն դեպս, բոլորովին էլ անիմաստ չէ ենթադրել, որ նա նշված տեղեկությունները մեղ է ավանդել իր ընկալած տեսքով: Օրինակ, շատ կասկածելի է, որ հույն հեղինակները, ոչ ավելի, ոչ պակաս Կրեսոսի ժամանակ հիշատակեին պարթև Արտաշեսին, քանի որ պարթևները հույների քաղաքական տեսադաշտում հայտնվելով հանդերձ մ.թ.ա. VI դ., մարերի և պարսիկների դեպի Փոքր Ասիա և Հունաստան կատարած արշավանքների ժամանակ, քաղաքական մեծ կշիռ ձեռք բերեցին միայն մ.թ.ա. III դ. կեսերից: Բայց դրա հետ մեկտեղ ենթադրել, թե Արտաշեսի անվան հիշատակությունը սոսկ Խորենացու երևակայության արդյունքն է, պարզապես անիմաստ է: Պատմահայրը դատելով նրա «Պատմութիւն Հայոց»-ից, կարող էր շփոթել միևնույն անունը կրող գործիչներին և նրանց ապրած ժամանակաշրջանները, սակայն բացարձակապես կասկած չի հարուցում այն իրողությունը, որ նշված անձինք գոյություն ունեցել են, հետևաբար Խորենացու կողմից մեզ ավանդված Արտաշեսի պատմությունը բացատրության և մեկնաբանության կարիք ունի:

Անշնորհակալ գործ է, անշուշտ, կռահումներ կատարելը, երբ փաստական նյութը գրեթե բացակայում է, սակայն հենվելով Թովմա Արծրունու մի տեղեկության վրա, այնուամենայնիվ, կամենում ենք բացատրության մի փորձ կատարել, որը, մեր կարծիքով, մեծ հավանականություն ունի, իսկ չի բացառվում նաև, որ պարզապես համապատասխանում է պատմական ճշմարտությանը: Մեզ անհայտ մի ինչ-որ սկզբնաղբյուրից օգտվելով, Արծրունյաց պատմիչը գրում է. «Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Կրոսիսեայ բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ, զօրս բազումս գումարեալ, ելանել տալ պատերազմ ընդ Կիւրոսի, զորոյ զօրաժողով լինելն իմացեալ Կիւրոսի գրէ առ Տիգրան զօրս յօդնականութիւն առաքել նմա. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւայինս և հիւսիսայինս տալ իր ձեռս Քսերքսեայ և Արշէզայ որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր

[9] Նույն տեղում:

հասցեն. որոց գնացեալ պատահեն նմա ի Դնբուինդ Պարսից: Եւ յառաջեալ առաջոյ զօրուն Կիւրոսի յարդարեն զգործ պատերազմին: Իբրև խոնեցան ի զօրադլուխ գունդ Լիդէացւոց նետաձգութեամբ ընդ միմեանս հարեալ, և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ, հասանէ արքայն Կիւրոս և Քսերքսէս. և Արշէզայ շուրջ փակեալ վահանաւորք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի դլուխ բովանդակ չթողեալ տեղի անկոուելի լինել զինուի, նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղենս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. և զօրքն ախոյեանայարձակ զպատերազմն վառէին: Յայնժամ ձայն բարձեալ Քսերքսէս և Արշէզ լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն, ասեն հարան զօրքն Կիւրոսի, և փախեաւ արքայն: Նոքա առ լուրն խնդացեալ լքին զամրացեալ գունդն աճապարել զհետ Կիւրոսի, ել և ելս արարեալ զմիմեամբք, և թագաւորն Լիդէացւոց ճեմս առեալ երթայր զկնի զօրուն:

Նոյն ժամայն Քսերքսէս և Արշէզ վազս առեալ պատահեն Լիդէացւոցն. և ձերբակալ արարեալ մերկանան ի զինէ և ասպազինէ և տանին կացուցանեն առաջի Կիւրոսի. զոր առեալ Կիւրոս դառնայ ի Խորասան. և անտի դարձեալ ի Բաբելոն, ընդ իւր տանելով զԼիդէացին. և զտունս գանձի նորա հրամայեաց ածել յաւարի. և տանջեալ զնա ջղօք՝ տայ նմա և զգանձս աներևոյթս, և ինքն մեռանի ի հրամանէ Կիւրոսի, բարձեալ զտէրութիւնն Լիդէացւոց:

Իբրև աջողութիւն գործոյն դլխաւորեցաւ եղև դառնալ Քսերքսեանց, առեալ ի պարգևի զՏմորիս ամրոցաւն և զգետափնեայսն Նինուէի»[10]: Թովմայի հետագա շարադրանքի մեջ խոսվում է Կյուրոսի գործունեության, Բաբելոնը գրավելու ու գերեվարված հրեաներին ազատելու, Դագա երկրի դաղատացիների տասներկու բյուր զորքի դեմ Տիգրանի ուղարկած օգնական զորքով՝ Քսերքսեսի և Արշեզի կողմից ղեկավարվող քառասուն հազարանոց բանակով արշավելու և նրանց ջախջախելու մասին, որի ժամանակ հայ զորականները շարժում են ոչ միայն պարսիկների, այլև օտարների զարմանքը: Հետո հայոց զորքը Կյուրոսի բանակների հետ հասնում է մինչև Երուսաղեմ և Քսերքսեսն ու Արշեզը հաղթանակած վերադառնում են հայրենիք[11]:

Մենք ընթերցողի ուշադրությանը ներկայացրինք պատմիչների բավականին հանգամանալից հաղորդումները, ցույց տալու համար, որ Արտաշես անվան հիշատակությունը Կրեսոսի ժամանակներում բոլորովին էլ պատահական չէ: Թովմա Արծրունու տեղեկությունը, որն, անկասկած, քաղված է մի հին, շատ արժեքավոր, բայց մեզ անհայտ աղբյուրից, ցույց է տալիս, որ Կրեսոսին գերի վերցնելու գործում հայերը ի դեմս Քսերքսեսի և Արշեզի, կարևոր դեր են կատարել, կամ էլ ինչ-ինչ պատճառներով, ո-

---

[10] Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի ե ւ Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհարար թարգմ. և ծանոթագր. Վ. Մ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Երևան, 1985, էջ 64, 66:

[11] Նույն տեղում, էջ 66:

րոնց մասին դատողություններ անելը նյութի գերսակավության պայմաններում գրեթե անհնարին է, ավելի ուշ այն վերագրվել է հայերին: Եվ եթե ի նկատի ունենանք, որ Քսերքսես անունը գործնականում նույնական է Արտաշեսին, ապա կտեսնենք, որ Քսերքսես-Արտաշեսին հույն հեղինակները կարող են շփոթել մեկ այլ Արտաշեսի հետ: Արդեն այն հանգամանքը, որ Թովմա Արծրունու հաղորդման համաձայն Կյուրոսը հայերի հետ մեկտեղ կռվում է գաղատացիների դեմ, հավաստում է, որ գործ ունենք ժամանակագրական որոշակի շփոթի հետ: Կելտական ցեղերը, որոնց հույները գալատներ (իմա՛ գաղաաներ կամ գաղատացիներ) էին անվանում, ներխուժել են Փոքր Ասիա մ.թ.ա. 278 թ. և, համաձայն Ստեփաննոս Բյուզանդացու միջոցով մեզ հասած III դ. պատմիչ Ապոլլոնիոսի տեղեկության, նրանք օգնել են պոնտական թագավոր Միհրդատ I-ին և նրա որդի Արիոբարզանին հետապնդելու Պտղոմեոսի կողմից Փոքր Ասիա ուղարկված եգիպտական զորքերին, որոնք հասել են մինչև Միջերկրական ծովը և Գաղատիայում հիմնել երեք քաղաք՝ Անկյուրան, Պեսինունտը և Տավիումը[12]: Հայտնի է, որ Պոնտոսի թագավոր Միհրդատ I Կտիստոսն իշխել է 302-266 թթ. մ.թ.ա. և նրա հարաբերությունները գաղատների հետ եղել են բարեկամական: Սակայն արդեն նրա հաջորդի՝ Արիոբարզանի օրոք, Պոնտական թագավորությունը ստիպված էր ծանր և երկարատև պայքար մղել գաղատների դեմ, որի ընթացքում Արիոբարզանը զոհվեց, իսկ գաղատներն սկսեցին ավերել պոնտական երկրամասերը[13]: Պոնտական թագավորության հետագա պատմությունից հայտնի է, որ Փառնակ I թագավորը 183-179 թթ. պատերազմի ժամանակ բանակով ներխուժեց Գաղատիա, որտեղ նրան միացան գաղատական ցեղերի առաջնորդներ Կարսիգնատոսը և Գեզետորիքսոսը[14]: Այս պատերազմի ժամանակ, որին որպես Պոնտոսի դաշնակից մասնակցում էր նաև Փոքր Հայքի թագավորությունը, պոնտական զորքերը 181/180 թթ. ձմռանը ամայացրին Գաղատիան, սակայն երբ Պերգամի զորքերը մուտք գործեցին Գաղատիա, Պոնտոսի դաշնակիցներ Կարսիգնատոսը և Գեզետորիքսոսն ընդունեցին Պերգամի իշխանությունը: Չխորանալով պատերազմի մանրամասների մեջ, որոնք դուրս են սույն ուսումնասիրության շրջանակից, միայն նշենք, որ Պոնտական և Փոքր Հայքի թագավորությունները պատերազմը տանուլ տվեցին[15]: Փառնակին արգելվեց ներխուժել Գաղատիա, իսկ նրա գաղատների հետ կնքած պայմանագրերը չեղյալ հայտարարվեցին: Պոնտական թագավորն իր կատարած ավերածությունների և Պերգամի թագավոր Եվմենեսի կատարած ռազմական ծախսերի համար Պերգամին, Կապադովկիային և Բյութանիային ստիպված եղավ վճարել 1200 տաղանդ, իսկ Փոքր Հայքի թագավորը՝ 300 տաղանդ՝ Կապադովկիա ներխուժելու համար: Ուշագրավ է, որ բանակցություններին մասնակցեցին Մեծ Հայքի թագավոր Արտաշես I-ը, ո-

---

[12] Stephani Byzantii Ethnicorum quae supersunt. Ex recensione Aug. Meinekii, t. I, Berolini, 1849, s.v. Ἀνκύρα.

[13] Н. Ломоури. К истории Понтийского царства. Тбилиси, 1979, с. 34—35.

[14] Polyb. XXIV, 8, 6:

[15] *Նույն տեղում, XXV, 2:*

ին պատմիչը հիշատակում է որպես Հայաստանի մեծ մասի կառավարիչ, սարմատների Գաթալոս թագավորը և մի քանի ազատ քաղաքների ներկայացուցիչները[16]:

Պոնտական Միհրդատ V թագավորի օրոք Պոնտոսը պահպանեց իր գերիշխանությունը պավլագոնական և գալատական հողերի նկատմամբ[17] շնորհիվ հռոմեական զորավար Մանիոս Ակվիլիոսի օժանդակության, որին որպես կաշառք որոշակի գումար էր տրվել: Այս վիճակը մնծապես փոխվել էր, երբ գահ բարձրացավ Միհրդատ VI Եվպատորը: Փոքր Հայքի թագավորությունը, որ Փառնակի օրոք Պոնտոսի քաղաքական ազդեցության ոլորտում էր, ոչ միայն լիակատար անկախացել էր, այլև իրեն էր միացրել նախկինում Պոնտոսին պատկանող Սև ծովի հարավարևելյան առափնյա շրջանը՝ Փառնակիա և Տրապիզոն քաղաքներով: Անկախացել էին Գալատիան, Պափլագոնիայի մեծ մասը, իսկ Փռյուգիան դրավվել էր Հռոմի կողմից[18]: Հակառակ իր երիտասարդ տարիքին, Միհրդատ VI Եվպատորը հանդես բերեց քաղաքագետի մեծ ունակություններ և կարողացավ կարճ ժամանակում վերականգնել իր պետության ռազմական հզորությունը և քաղաքական հեղինակությունը: Ուսումնասիրողները հակված են կարծելու, որ պոնտական թագավորի առաջին գործերից մեկը եղավ Փոքր Հայքի թագավորության նվաճումը, խլելով այն Ափսիսի որդի Անտիպատրոս թագավորից: Իրերի բերումով մենք այդ հարցին դեռ կանդրադառնանք, որովհետև այն անմիջականորեն առնչվում է մեր քննարկվող խնդրին, այժմ լոկ նշենք, որ Միհրդատ VI-ը դրավեց նաև Կոզքիսը (իմա՛ ներկայիս Արևմտյան Վրաստանի տարածքը), ինչպես նաև Եվքսինյան Պոնտոսի (Սև ծովի) հյուսիսարևելյան առափնյա շրջանը:

Ամրապնդելով իր թիկունքը ոչ միայն հիշյալ երկրների միացումով, այլև Մեծ Հայքի հետ կնքած փոխօգնության պայմանագրով, պոնտական թագավորը կարող էր իր հայացքն ուղղել դեպի փոքրասիական հելլենիստական պետությունները, որոնք նա մտադիր էր միավորել իր իշխանության ներքո: Իսկ այստեղ քաղաքական քարտեզը ներկայացնում էր ներքոբերյալ պատկերը: Հռոմն իրեն էր միացրել Պերգամի թագավորությունը, որն ստացել էր Առանձնակ Ասիա պրովինցիա անունը, և Կիլիկիան, որը նույնպես վերածվել էր առանձին պրովինցիայի: Մ.թ.ա. 116 թ. Հռոմը Պոնտոսից գրավել էր Մեծ Փռյուգիան և Կապադովկիայից՝ Լիկաոնիան[19]: Գալատիան անկախացել էր Պոնտոսից և այնտեղ իշխում էին Հռոմի քաղաքական ազդեցության տակ գտնվող չորրորդապետերը կամ տետրարքոսները: Հռոմն իր ռազմավարական խնդիրն էր համարում Գալատիան պահպանել որպես բուֆերային՝ իր գերիշխանության ոլորտում գտնվող պետություն, հռոմեական տիրույթների և Պոնտոսի թագավորության միջև[20]: Պափլագոնիան իրենից ներկայացնում էր մի քանի կիսանկախ երկրամասեր, որոնց մի մասը գտնվում էր Պոնտոսի, մյուս մասը՝ Բիթանիա-

---

[16] *Նույն տեղում, XXVI, 6:*

[17] Т. Моммзен. История Рима. Т. II, М., 1937, с. 57. *Տե՛ս նաև* Ed. Meyer. Geschichte des Konigreich's Pontos. Leipzig, 1879, S. 47.

[18] Th. Reinach. Mithridates Eupator Konig von Pontos. Leipzig, 1895, S. 47.

[19] *Նույն տեղում, էջ 73-74:*

[20] Appian. Mithr., 46 1 50.

յի և երրորդը՝ Գաղատիայի գերիշխանության ներքո[21]: Պոնտոսի թագավորության մրցակից և նրան արևմուտքից սահմանակից Բյութանիայի թագավորությունը, որ տիրում էր Բոսֆորի նեղուցին և վերահսկում ծովային առևտրական ուղիները, նշանակալից ուժեղացել էր և սերտ հարաբերություններ էր պահպանում Հռոմի հետ: Վիճակը համեմատաբար լավ էր հարավում, որտեղ թուլացած և անկման ուղին բռնած Կապադովկիան մեծապես գտնվում էր Պոնտոսի քաղաքական ազդեցության ներքո[22]: Փոքրասիական հելլենիստական թագավորություններն ավելի կամ պակաս չափով գտնվում էին Հռոմի ազդեցության ոլորտում կամ գերիշխանության ներքո, ուր ազատորեն մուտք էր գործում հռոմեական ֆինանսական կապիտալը՝ տնտեսապես ենթարկելով դրանք Հռոմեական հանրապետությանը: Վիճակն անհամեմատ ավելի վատ էր հռոմեական պրովինցիաներում, որտեղ հռոմեական վարչության լուծն անտանելի էր դարձել, իսկ հռոմեական պաշտոնեության կամայականություններն անցել էին ամեն մի թույլատրելի սահման: Հակահռոմեական տրամադրությունները, որոնք պարարտ հող էին ստացել ստեղծված կացության պատճառով, միանգամայն նպաստավոր էին Պոնտոսի դեպի արևմուտք ծավալվելու համար, որոնցից Միհրդատ Զ-ը չհապաղեց օգտվել:

Առաջին երկիրը, որ պոնտական թագավորը գրավեց, Պափլագոնիան էր: Մ.թ.ա. 106 կամ 105 թ. դաշինք կնքելով Բյութանիայի թագավոր Նիկոմեդես II-ի հետ, Միհրդատ VI-ը այդ երկիրը կիսեց նրա հետ իր թագավորությանը միացնելով վերջինիս մեծագույն մասը: Հռոմի լռելյայն համաձայնությունը, հավանաբար, ձեռք բերվեց Հռոմ ուղարկված պատվիրակության կողմից սենատորներին կաշառելու միջոցով[23]: Չնայած պաշտոնապես նվաճումը չճանաչվեց, Հռոմը ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց զավթիչներին Պափլագոնիայից դուրս վտարելու ուղղությամբ, որը մնաց հիշյալ թագավորի իշխանության ներքո[24]: Ազատ չունչ քաշելով այս առաջին հաջողությունից հետո և իրեն բավարար ուժեղ զգալով, Միհրդատ VI-ը առանց որևէ մեկի հետ դաշնակցելու, հարձակվեց Գաղատիայի վրա, որտեղ նա կոտորեց գրեթե բոլոր տետրարքոսներին, որոնցից փրկվեցին միայն երեքը: Հայտնի է, որ Փոքր Ասիա մուտք գործած գաղատները բաղկացած էին երեք ցեղերից՝ տոլիստոբոգիներ, տեկտոսադեր և տրոքմեր, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում էր չորս չորրորդապետության կամ տետրարքիայի: Այլ խոսքով, Գաղատիան բաղկացած էր տասներկու տետրարքիայից, որոնք ունեին իրենց ընդհանուր ժողովը՝ կազմված 300 մարդուց[25]: Թ. Ռեյնախի կարծիքով փրկված երեք տետրարքոսներից մեկը պետք է որ եղած լինի Դեյոտարոսը, որին հետագայում բախտ էր վիճակված միավորելու ամբողջ Գաղատիան[26]:

---

[21] S t r a b o, XII, 3, 14. St. Byz., s.v. Κρῆσα.

[22] Н. Л о м о у р и. Նշվ. աշխ., էջ 81:

[23] Նույն տեղում, էջ 84:

[24] J u s t i n, XXXVII, 4; XXXVIII, 7. T h. R e i n a c h. Նշվ. աշխ., էջ 87-88:

[25] Галаты, տե՛ս "Советская историческая энциклопедия", т. IV, М., 1963, с. 49.

[26] T h. R e i n a c h. Նշվ. աշխ., էջ 88-89: Տե՛ս նաև J u s t i n, XXXVII, 4, 6.

Բավական է ուշադրություն դարձնել այս իրադարձության վրա Թովմա Արծրունու տեղեկությունների լույսով, համոզվելու համար, որ Քսերքսեսի և Արշեզի կողմից ղեկավարված հայկական զորքերի գաղատացիների դեմ ձեռնարկված արշավանքը կարող է նույնանալ միայն Միհրդատ VI-ի վերը նշված արշավանքին դեպի Գաղատիա: Չնայած հստակ տեղեկությունների բացակայությանը, դժվար չէ ենթադրել, որ գաղատական ամեն մի տետրարքոս պահել է մի բյուրից բաղկացած զորամաս, ուստի Արծրունյաց պատմիչի կողմից դաղատացիներին տասներկու բյուրից բաղկացած զորք վերագրելը բոլորովին էլ անիմաստ չէ: Մեզ չպետք է զարմացնի նաև զորքի նման քանակությունը, որ կարծես շատ ավելին է Գաղատիայի պես երկրի համար: Իրականում հարցը շատ պարզ պատասխան ունի: Ցեղային կազմակերպությունը պահպանած դաղատների մոտ ամեն մի հասուն տղամարդ ռազմիկ էր, որը կարող էր մարտագաշտ գուրս գալ անհրաժեշտության դեպքում: Ժամանակագրական առումով, որ այս հիշատակությունը վերաբերել է Միհրդատ VI-ի ժամանակներին, իր անուղղակի հաստատումն է գտնում Պատմահոր մոտ, որի խոսքերով Հռոմում տեղ գտած խռովությունների պատճառով հայոց Արտաշես թագավորին ոչ ոք չի ընդդիմանում իր արշավանքի ժամանակ: Եվ եթե շարունակենք Միհրդատ VI-ի մղած պատերազմների պատմությունը, ապա կտեսնենք, որ այն դրեթե նույնական է Պատմահոր կողմից հայոց Արտաշես թագավորի մղած պատերազմի մասին բերված հաղորդմանը:

Մենք մտադիր չենք Միհրդատ VI-ի մղած պատերազմներին լրիվ անդրադառնալ: Ասենք միայն, որ նա Տիգրան II հայոց թագավորի օգնությամբ մի քանի անգամ ռազմակալեց Կապադովկիան: Հռոմը, որ քաղաքացիական խռովությունների շրջան էր ապրում, այնուամենայնիվ, ստիպեց, որ պոնտական բանակները դուրս դան Կապադովկիայից, իսկ բյութանիական զորքերը՝ Պավլագոնիայից: Թվում էր, թե Սուլլայի կողմից Արիոբարզանին Կապադովկիայի գահ բարձրացնելուց հետո, որն անմռունչ ընդունվեց պոնտական թագավորի կողմից, խաղաղությունը վերականգնված է: Սակայն մոտավորապես այդ ժամանակներում մահացավ Բյութանիայի թագավոր Նիկոմեդես II-ը և նրան հաջորդեց նրա որդին՝ Նիկոմեդես III Փիլիպատորը, որի գահակալությունը հաստատեց հռոմեական սենատը: Սակայն գահի նկատմամբ հավակնություններ հանդես բերեց նրա եղբայր Սոկրատես Քրեստոսը, որն օգնություն ստացավ Միհրդատ VI Եվպատորից: Հասկանալի է, որ, գտնվելով անելանելի վիճակում, Նիկոմեդես III-ն էլ իր հերթին դիմեց հռոմեական սենատի օժանդակությանը: Վերջինս Փոքր Ասիա ուղարկեց Մանիոս Ակվիլիոսին, որը վերականգնեց Նիկոմեդես III-ի իշխանությունը, իսկ Միհրդատ VI-ը ոչ միայն դիմադրություն ցույց չտվեց, այլև հրամայեց սպանել Սոկրատես Քրեստոսին[27]: Սակայն Պոնտոսի բռնած դիրքը ինչ-ինչ պատճառներով չգոհացրեց հռոմեացիներին և Մանիոս Ակվիլիոսը, անկասկած, սենատի հրահանգով քայլեր ձեռնարկեց Միհրդատին պատերազմի մեջ ներքաշելու ուղղությամբ: Նրա հրահրմամբ Նիկոմեդես III-ը փակեց Բոսֆորի նեղուցը պոնտական

[27] J u s t i n, XXXVIII, 2-3. A p p i a n., Mithr., 11.

նավերի համար, իսկ ինքն էլ ցամաքային ուժերով ներխուժեց Պոնտոս ու սկսեց ասպատակել մինչև Ամաստրիս ընկած հողերը: Պոնտական թագավորը բավարար ուժեր ուներ պատժելու Նիկոմեդես III-ին, սակայն շատ լավ հասկանալով, թե ով է նրա թիկունքում կանգնած,[28] գեսպան ուղարկեց Ակվիլիոսի մոտ, գանգատվելով բյութանիական թագավորի ապօրինի գործողություններից: Պոնտական կողմը խնդրում էր կամ միջամտել ու օգնել Միհրդատին, կամ էլ թույլատրել պաշտպանվելու սեփական ուժերով: Մանիոս Ակվիլիոսը պատասխանեց, որ Պոնտոսը պետք է ձեռնպահ մնա Նիկոմեդեսի հետ պատերազմելուց[29]:

Ստեղծված պայմաններում Միհրդատը որոշեց չենթարկվել հռոմեացիներին և ձեռնամուխ լինել իր վաղուց փայփայած ծրագրի հելլենիստական խոշոր պետություն ստեղծելու գաղափարի իրականացմանը, քաջ գիտակցելով, որ այն տանում է Հռոմի հետ առճակատման: Շուտով ռազմակալվեց Կապադովկիան, որը հռոմեացիները պահանջեցին ազատել և ձեռնպահ մնալ Բյութանիայի գործերին միջամտելուց: Միհրդատի համար պարզ դարձավ, որ պատերազմն անխուսափելի է: Ուստի նա սկսեց տենդորեն պատերազմի պատրաստվել: Ինչ վերաբերում է Հռոմին, ապա վերջինս իտալիկների ապստամբության պատճառով ծանր կացության մեջ էր գտնվում:

Մ.թ.ա. 89 թ. սկսվեց Միհրդատյան Առաջին պատերազմը: Պոնտական թագավորի հռոմեացիներին գերազանցող ուժերը՝ 250 հազար հետևակ և 40 հազար այրուձի զինվոր, գումարած Փոքր Հայքի 10-հազարանոց հեծյալ զորաբանակը, 130 մարտակառքերը, 300 տախտակամածով և 100 երկշարք թիեր ունեցող նավերը,[30] մարտական գործողություններ սկսեցին Հռոմի դեմ ծովում և ցամաքում: Հռոմեացիներն իրենց տրամադրության տակ ունեին 120 հազար հետևակ և 12 հազար հեծյալ մարտիկներ, որոնց կարող էին միանալ Նիկոմեդես III-ի 50 հազար հետևակայինները և 6 հազար այրուձի մարտիկները[31]: Հռոմեական զորքերը՝ բաժանվելով երեք մասի, Կասիոսի գլխավորությամբ դիրքեր գրավեցին Բյութանիայի և Գալատիայի սահմանագլխին, Ակվիլիոսի ղեկավարությամբ՝ Բյութանիայի և Պոնտոսի սահմանագլխին, որտեղից Միհրդատը կարող էր ներխուժել Բյութանիա, և Օպիոսի առաջնորդությամբ՝ Կապադովկիայում, իսկ հռոմեական նավատորմը Մինուկիոս Ռուփոսի և Գայոս Պոպիլիոսի հրամանատարությամբ խարիսխ ձգեց Բյուզանդիոնի մոտ՝ հսկողության տակ առնելով դեպի Եվքսինյան Պոնտոս տանող ծովային ուղին: Միհրդատն էլ իր հերթին իր զորքերը բաժանեց երեք բանակների, որոնց գլուխ կանգնեցին Արքելայոս զորավարը, նրա եղբայր Նեոպտոլեմոսը և ինքը: Ուժերի առավելությունը շուտով իրեն զգալ տվեց: Նիկոմեդեսի զորքերը խայտառակ պարտություն կրեցին, իսկ հռոմեացիները՝ պարտություն կրելով մի շարք ճակատամարտերում, ստիպված եղան փախուստ տալ: Նիկոմեդեսը և Ակվիլիոսը սկզբում ամրացան Պերգամում, հետո փախան Հռոդոս կղզի

[28] A p p i a n., Mithr., 12.
[29] Նույն տեղում, 12-14:
[30] A p p i a n., Mithr., 17.
[31] Նույն տեղում:

և այնուհետև՝ Լեսբոս, որտեղ նրանց միացավ Ապամեայում ամրանալու անհաջող փորձ կատարած Կասիոսը: Կվինտոս Օպիոսը փակվեց Լաոդիկեայում և որոշ ժամանակ դիմադրություն ցույց տվեց, իսկ նավատորմի հրամանատարները, սարսափահար դառը պարտություններից, նավերը հանձնեցին Միհրդատին, որը տիրեց Բոսֆորին: Պոնտական թագավորն իր գործունեությամբ օրավուր ուժեղացնում էր իր նկատմամբ Փոքր Ասիայում վաղուց ձևավորված համակրանքը, որի դրսևորումներից մեկը եղավ Լաոդիկեայի բնակիչների կողմից Կվինտոս Օպիոսին Միհրդատին հանձնելը: Լեսբոս կղզու Միտիլենե քաղաքը նրան հանձնեց պատերազմի իսկական հրձիգին՝ Մանիոս Ակվիլիոսին, որին Միհրդատը՝ Փոքր Ասիայով մեկ ձիուն կապված կամ ջորուն ամրացված պտտեցնելուց հետո, Պերգամում կարգադրեց արծաթասիրության համար կոկորդը հալած ոսկի լցնել: Ընչաքաղցը մահացավ անասելի տանջանքների ենթարկվելով: Միհրդատի հրամանով 80 հազար հռոմեացիներ և իտալիկներ կանանց և երեխաների հետ մի որոշակի օր կոտորվեցին[32]:

Հաշվի առնելով Պերգամի ռազմավարական դիրքն ու տնտեսական նշանակությունը, պոնտական թագավորը մայրաքաղաքը տեղափոխեց Սինոպից Պերգամ: Կապադովկիան, Փռյուգիան և Բիթանիան վերածվեցին պոնտական սատրապությունների, իսկ հունական քաղաքներն ազատ հռչակվեցին հինգ տարով ազատվելով ամեն տեսակի հարկերից: Պատերազմական գործողությունները տեղափոխվեցին Եվրոպա, որտեղ նրան օգնում էին Թրակիայի և Արևմտյան մերձսևծովյան շրջանի դաշնակիցները: Թագավորի որդի Արիարաթը ներխուժեց Մակեդոնիա և վերջինիս Արդերա և Փիլիպե քաղաքները վերածեց ռազմական հենակետերի: Էգեյան ծով մտավ պոնտական ռազմական նավատորմը և շուտով ռազմակալեց բոլոր կղզիները: Դիմադրեց միայն Հռոդոսը, որն անգամ պարտության մատնեց Արքելայոս զորավարին, դրանով իսկ խանգարելով պոնտական զորքերին ամրանալու Բալկաններում: Այսուհանդերձ, նա նավատորմի մի մասը թողնելով Հռոդոսում, նավատորմի և ցամաքային ուժերի մեծ մասն ուղարկեց Հունաստան, որտեղ բնակչությունը նրան սպասում էր որպես ազատարարի: Ապստամբեց Աթենքը: Բացի Էպիրոսից, ամբողջ Հունաստանն անցավ Միհրդատ VI-ի կողմը՝ ընդունելով նրա իշխանությունը: Պոնտական զորքերին, որպես Հռոմի դաշնակիցներ կամ ենթականեր, դիմադրություն էին ցույց տալիս միայն Հռոդոսը և Կարիայի ու Լյուկիայի որոշ քաղաքներ: Հռոմեական իշխանությունն Արևելքում փաստորեն վերացվել էր:

87 թ. մ.թ.ա. վերջապես Բալկաններ ուղարկվեց հունական մի բանակ Կոռնելիոս Սուլլայի գլխավորությամբ: Նա ափ դուրս եկավ Էպիրոսում, արագ շարժվեց Բեոտիա և Արքելայոս զորավարին հաղթելուց հետո 86 թ. մարտի 1-ին գրավեց Աթենքը թույլատրելով իր զինվորներին կողոպտել այն: Զունենալով նավատորմ և անհրաժեշտ դրամական միջոցներ, Սուլլան չկարողացավ զարգացնել հաջողությունը, որին մեծապես նպաստեց Հռոմում Գայոս Մարիոսի իշխանության գլուխ գալը: Սուլլան պաշ-

[32] Նույն տեղում, 22-23: Memnon, 30.

տոնանկ արվեց, նոր զորահրամանատար նշանակվեց Վալերիոս Ֆլակկոսը: Անհանգստացած իր զորքերի պարտությամբ, Միհրդատը նոր զորքեր ուղարկեց Մակեդոնիա Դորիլայոսի առաջնորդությամբ: Վերջինս իր ուժերով միացավ Արքելայոսի զորքերի մնացորդներին և, չանսալով վերջինիս խորհուրդներին, հարձակվեց հռոմեական բանակի վրա և նույն թվականին Քերոնեայի մատույցներում խայտառակ պարտություն կրեց: Պոնտական զորքերը, կրկին պարտություն կրելով Օրքոմենեի մոտ, ստիպված էին թողնել Հունաստանը: Ի վնաս Միհրդատի փոխվեց իրադրությունը նաև Փոքր Ասիայում, որտեղ բնակչությունը դիմավորելով նրան որպես ազատարարի, շատ շուտով հիասթափվեց նրանից հարկերի ու պարհակների մշտական բարձրացման և հաճախակի զորակոչների պատճառով: Հունական քաղաքների արիստոկրատական և առևտրավաշխառուական խավերը դժգոհ Միհրդատի բռնատիրությունից, աստիճանաբար սկսեցին հակվել դեպի Հռոմը: 86 թ. ապստամբեց Եփեսոս քաղաքը, որը չնայած ճնշվեց և թագավորը գնաց մի քանի զիջումների, դրությունը փրկել այլևս չհաջողվեց: 86 թ. Հունաստանում ափ իջած հռոմեական նոր բանակը Պրոպոնտիսում հաղթեց Միհրդատի զորքերին և գրավեց Պերգամը, իսկ հռոմեական նոր ստեղծված նավատորմը տիրեց Էգեյան ծովի կղզիներին: Դրությունն այնպես ծանրացավ, որ Միհրդատը հանձնարարեց Արքելայոսին հաշտության բանակցություններ սկսել: Եվ քանի որ Սուլլան նույնպես շահագրգռված էր պատերազմը շուտափույթ ավարտելու հարցում, նա համեմատաբար թեթև պայմաններ դրեց՝ պահանջելով իրեն հանձնել Արքելայոսի հրամանատարության տակ գտնվող ողջ նավատորմը, վերադարձնել գերիներին և փախստականներին (իմա՛ պոնտացիների կողմն անցածներին), ազատել Եվքսինյան Պոնտոս տարված Քիոս կղզու բնակիչներին, դեռևս Միհրդատի ենթակայության տակ գտնվող ամրոցներից դուրս բերել զորքերը, վճարել հռոմեական զորքերի ռոճիկը և սննդամթերք մատակարարել նրանց, փոխհատուցել պատերազմական ծախսերը 3000 տաղանդի չափով և վերադարձնել Կապադովկիան, Պափլագոնիան, Գալատիան, Բյութանիան, Ասիա Առանձնակն ու կղզիները՝ բավարարվելով սեփական տիրույթներով[33]:

84 թ. Միհրդատը մեծ դժկամությամբ ստիպված եղավ ընդունել բոլոր պայմանները: Դարդանոսի բանավոր հաշտությամբ խաղաղություն հաստատվեց և Միհրդատյան պատերազմն ավարտվեց: Վերականգնվեցին Բյութանիայի և Կապադովկիայի թագավորությունները[34]: Վերադառնալով Սինոպ, Միհրդատն ստիպված էր խաղաղացնելու իր դեմ ապստամբած Կողքիսը և ճնշելու ապստամբությունը Բոսպորում: Նա կարողացավ գլխովին ջախջախել հռոմեական զորավար Մուրենայի բանակը, որը ներխուժեց Պոնտոս և ավերեց մի շարք երկրամասեր: Մուրենայի զորքերի

---

[33] A p p i a n., Mithr., 55. P l u t., Sulla, 31-32. Memnon, 35.

[34] *Միհրդատյան Առաջին պատերազմի ընթացքի մասին մանրամասն տե՛ս* T. M o m m s e n. *Նշվ. աշխ., էջ 266–268.* H. B e r n h a r d t. Chronogie der Mithridatischen Kriege, Dissert. Marburg, 1896, S. 7 *և շարունակություն:* T h . R e i n a c h. *Նշվ. աշխ., էջ 298 և շարունակություն:* A. D u g g a n. The Died Old Mithridates Eupators, King of Pontus. London, 1958, p. 168 *և շարունակություն:*

ջախջախումը, որ տեղի ունեցավ մ.թ.ա. 83-82 թթ., պատմագիտության մեջ ընդունված է անվանել Միհրդատյան Երկրորդ պատերազմ: Հասկանալով, որ Դարդանոսի բանավոր հաշտությունը կարող է ամեն պահ խախտվել, պոնտական թագավորը 79 թ. պատվիրակություն ուղարկեց Հռոմ՝ խնդրելով Սուլլային գրավոր ձևակերպել Դարդանոսի հաշտությունը: Օգտագործելով որպես պատրվակ Կապադովկիայի թագավոր Արիոբարզանի բողոքը՝ Կապադովկիայի հյուսիսային շրջանները չազատելու վերաբերյալ, Սուլլան հրաժարվեց պայմանագիրը գրավոր վավերացնելուց և պահանջեց Միհրդատից մաքրել Հյուսիսային Կապադովկիայի տարածքը պոնտական զորքերից: Պոնտական թագավորը պահանջը կատարեց և 78 թ. նոր պատվիրակություն ուղարկեց Հռոմ նույն խնդրանքով: Ի ցավ Միհրդատի, Սուլլան արդեն մահացել էր, իսկ սենատը պատվիրակներին լսել անգամ չուզեց: Միհրդատը, որ Առաջին պատերազմում պարտություն կրելուց հետո աշխատում էր խուսափել Հռոմի հետ բախվելուց, հասկացավ, որ բանակցություններն այլևս իմաստ չունեն և պետք է կրկին պատրաստ լինել պատերազմի: Միհրդատի համար խիստ նպաստավոր էր այն իրողությունը, որ Փոքր Ասիայի բնակչությունը Սուլլայի դաժան ձեռնարկումների և հռոմեական պաշտոնեության ու առևտրավաշխառուական խավերի կամայականությունների ու շորթումների պատճառով ատելությամբ էր լցված հռոմեացիների նկատմամբ: Կոնսուլ Մարկոս Լեպիդոսը 87 թ. ապստամբել էր, շարժվել Հռոմ՝ գլխավորելով հյուսիսային Իտալիայի դժգոհ տարրերին, իսկ Իսպանիայում տաղանդավոր զորավար Քվինտոս Սերտորիոսը մատնում էր պարտություն պարտության հետևից հռոմեացիներին: Պոնտական թագավորը մեծ բանակ ստեղծեց, որը դաշնակից զորքերի հետ միասին կազմված էր 140 հազար հետևակայիններից և 16 հազար հեծյալ մարտիկներից[35]: Ըստ անտիկ աղբյուրների, Միհրդատի ռազմական նավատորմը կազմված էր 400-ի չափ մեծ ու բավարար քանակությամբ փոքր նավերից: Պոնտական բանակն աչքի էր ընկնում իր պատրաստվածությամբ և զինվածությամբ: Բանակցություններ սկսելով Սերտորիոսի հետ, որը համաձայնվեց նրան զիջել Կապադովկիան, Բյութանիան, Պափլագոնիան, Գաղատիան և օգնական զորաջոկատ ուղարկեց փորձված զորավարի գլխավորությամբ, Միհրդատին բավականին հուսապնդեց և նա իր հերթին նրան ուղարկեց դրամ և 40 նավից բաղկացած նավատորմ[36]:

Միհրդատյան Երրորդ պատերազմի պատրվակ դարձավ Բյութանիայի թագավոր Նիկոմեդես III-ի մահը, որն իր թագավորությունը կտակել էր Հռոմին: Անկախ այն հանգամանքից, որ կտակը բնավ էլ կամավոր չէր գրվել և թագավորը դա կատարել էր հռոմեացի վաճառականներից ու վաշխառուներից պարտք վերցրած նշանակալից դումարները վերադարձնել չկարողանալու պատճառով, Միհրդատը, որին բնավ չէր ուրախացնում Հռոմին սահմանակից դառնալու ապագան, հանդես եկավ Նիկոմեդես III-ի որդու իրավունքների պաշտպանությամբ և մ.թ.ա. 73 թ. նրա բանակները շատ արագ ռազմակալեցին Բյութանիան: Ջախջախելով Կոտտայի զորքը, պոնտական զորքերը շարժվեցին Ասիա պրովինցիա և գրավեցին Հելլես-

[35] A p p i a n., Mithr., 69.
[36] A p p i a n., Bell. civ., I, 107, Iberica, 101.

պոնտոսի առափնյա շրջանը: Նրանց ձեռքն ընկավ Կոտտայի հրամանատարության տակ գտնվող հռոմեական ողջ նավատորմը: Սակայն հռոմեական զորավար Լուկուլլոսին հաջողվեց ոչ միայն ետ գրավել հռոմեական տիրույթները, այլև պարտության մատնելով Միհրդատին, ներխուժել Պոնտոս: Կրելով պարտություն պարտության հետևից, Միհրդատ VI-ն ստիպված էր փախչել Հայաստան: Վերջին ծանր պարտությունը նա կրեց Կարեյրայի մոտ: Լուկուլլոսին հաջողվեց մեծ դժվարությամբ գրավել ծովափնյա Ամիսոս, Պոնտական Հերակլեա և Սինոպ, ինչպես նաև վաճառաշահ Ամասիա քաղաքները:

Լուկուլլոսը, հաղթանակներից հարբած, հայոց արքայից արքա Տիգրան II-ից պահանջեց իրեն հանձնել Միհրդատ Պոնտացուն, շատ լավ գիտակցելով, որ պահանջը մերժվելու է: Պահանջը հենց այդ խնդիրն էր հետապնդում մերժման դեպքում ձևական իրավունք ստանալ Մեծ Հայքի թագավորության վրա հարձակվելու համար: Մ.թ.ա. 69 թ. ստանալով հայոց արքայի մերժողական պատասխանը, Լուկուլլոսը ներխուժեց Հայոց տերություն և չնայած սկզբնական շրջանում ունեցած հաջողություններին, վերջին հաշվով պարտություն կրեց: Օգտվելով հայկական բանակների տարած հաղթանակից և Տիգրան Մեծի ռազմական օժանդակությունն ստանալով, Միհրդատ VI-ը շուտով վերականգնեց իր իշխանությունը Պոնտոսում: Գալով Փոքր Ասիա, հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսը ստիպված էր կրկին գրավելու Պոնտական թագավորությունը, իսկ Միհրդատը զրկվելով Տիգրան Մեծի հյուրընկալությունից, որը կասկածում էր նրան իր որդիներին իր դեմ ապստամբեցնելու խնդրում, սկզբում փախավ Կողքիս, այնուհետև անցավ Բոսպորյան թագավորություն: Հաստատելով իր իշխանությունն այնտեղ, նա սկսեց Հռոմի դեմ պայքարի նոր ծրագրեր մշակել: Սկզբում նա մտադիր էր Եվքսինյան Պոնտոսի հյուսիսային ափերով շարժվել Թրակիա և հռոմեացիների վրա հարձակվել Եվրոպայում, սակայն շուտով նրա մեջ ծնունդ առավ մի համարձակ ծրագիր, որով նախատեսվում էր Թրակիայի, Մակեդոնիայի և Պեոնիայի վրայով ներխուժել Իտալիա Ալպերի վրայով և Հաննիբալի օրինակով փորձ անել ջախջախելու հակառակորդին իր երկրում: Այս ծրագիրը դատելով Բոսպորյան թագավորության համեստ հնարավորություններից, հազիվ թե իրագործելի էր, սակայն Միհրդատ Պոնտացին սկսեց եռանդուն ձևով պատրաստվել դեպի Հռոմ ձեռնարկվելիք արշավանքին: Զորահավաքները, անասելի ուռճացած հարկերը մեծ դժգոհություն առաջ բերեցին բնակչության մեջ, որն ապստամբեց: Ապստամբեց նաև թագավորի որդի Փառնակը: Ապստամբությունը ճնշել չկարողանալով և փրկություն որոնելով ապստամբ զինվորներից, հպարտ ծերունին որոշեց ինքնասպանություն գործել նախապես ոչնչացնելով իր կանանոցը և առաջին հերթին դստերերին: Միհրդատը թույն ընդունեց, սակայն հակաթույների վարժված նրա մարմինը թույնից չազդվեց: Թագավորի պահանջով նրան սպանեց իր հավատարիմ մերձավորներից կելտ Բիտոյտը[37]:

Մենք մատուցեցինք Միհրդատ VI Եվպատորի Հռոմի հետ մղած պատերազմի համառոտ պատմությունը՝ ցույց տալու համար, թե ինչպես այն

[37] Նույն տեղում, էջ 111:

համընկնում է Պատմահոր հաղորդմանը: Սա մեր հայտնագործությունը չէ և, ինչպես սպասելի էր, Խորենացու վերոհիշյալ խճողված հաղորդումը վաղուց ի վեր արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը: Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, անդրադառնալով պոնտական թագավոր Միհրդատ VI Եվպատորի զորքերի ունեցած հաջողություններին Փոքր Ասիայում, Եվրոպա անցնելու ու Թրակիան և Մակեդոնիայի մի մասը դրավելուն, նշում է, որ պոնտացիների՝ Հռոմի դեմ մղած պատերազմի մասին աղոտ տեղեկություններ են պահպանել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը և «Աշխարհացոյց»-ը[38]: Եվ, իրոք, վերջինիս տեղեկությունները հար և հարազատ են առաջինի հաղորդմանը: Պատմահայրը, որի գրչին է պատկանում նաև «Աշխարհացոյց»-ը, գրում է. «Եւրիու մեծ կղզի, եւ Ատալանտ փոքրիկ կղզեակ ի մէջն. զոր ասեն գտեալ զօրացն Արտաշեսի Հայոց արքայի, զի մի նաւք ռոճկացն յամիցեն, մինչև պաշարեալն էր զդղեակն Զարմանալի. զի ջուրք յանպատճառս այսր անդր հոսէին. եւ ասեն անդ մեռեալ Արտաշէսի. և Արիստոտէլ անդ եղեւ խորասոյզ. Եւռոպոս է անուն նորա»[39]: Թե՛ գերմանացի մեծ հայագետ Յ. Մարքվարթը և թե՛ Հ. Մանանդյանը եկել են այն եզրակացության, որ Զարմանալի կոչված դղյակն անկասկած Աթենքն է[40], որը պատերազմի ժամանակ պաշարել էր հռոմեական զորավար Սուլլան, իսկ Եվբեա (Էվբեա) մեծ կղզին գրավել էին 88 թ. պոնտական զորքերը: Խորենացու տեղեկությունն այն մասին, թե հայոց Արտաշես թագավորը գրավել էր երկու ծովերի միջև ընկած ցամաքը, այսինքն՝ Փոքր Ասիան, և լցրել օվկիանոսը նավերի բազմությամբ, անտարակույս, համապատասխանում է պոնտացիների մղած մասնավորապես Միհրդատյան Առաջին պատերազմի իրադարձություններին: Հատկապես այդ ժամանակներին է վերաբերում այն ճիշտ տեղեկությունը, թե Միհրդատ VI Եվպատորի կողմից մ.թ.ա. 88 թ. Թրակիայի, Մակեդոնիայի և Հելլադայի նվաճման ժամանակ Հռոմը չկարողացավ «հզօրապէս ընդդիմանալ» պոնտական զորքերին ներքին մեծ հուզումների և խռովությունների պատճառով[41]:

Հանդելով միանգամայն արդարացված և ճիշտ եզրակացությունների, Հ. Մանանդյանը գալիս է այն մտքին, որ Խորենացուն ծանոթ չեն եղել Միհրդատյան, այսինքն՝ Միհրդատ VI Եվպատորի մղած պատերազմներին վերաբերող հռոմեական և հունական աղբյուրները, ուստի և նա չի կարողացել տալ պատմական այս շրջանի ճշգրիտ պատմությունը և չփոթելով դեպքերը, ենթադրել է, թե վերոհիշյալ անցքերը կարող էին տեղի ունենալ Լյուդիական Կրեսոս թագավորի և Արտաշես Աշխարհակալի ժամանակ[42]: Այս ամենն իր ամբողջության մեջ, անշուշտ, ճիշտ է, սակայն, այնուամենայնիվ, բաց է մնում այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ է Խորենացին հանգում նման սխալ եզրակացության: Սակայն նախքան այս հարցին

---

[38] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա, Երևան, 1944, էջ 145:

[39] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 17:

[40] J. M a r q u a r t, E r a n š a h r. Berlin, 1901, S. 4. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 147:

[41] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 147:

[42] Նույն տեղում:

պատասխանելը, հարկ ենք համարում նշել, որ Հ. Մանանդյանն ուշադրություն է դարձնում Խորենացու հաղորդման այն մասին, թե Հելլադայից Հայաստան էին բերվել Դիոսի (իմա՛ Զևսի), Արտեմիդեի, այսինքն՝ Արտեմիսի, Աթենասի, Հեփեստոսի, Ափրոդիտեի արձանները և քննադատում ֆրանսիական ուսումնասիրող Ա. Կարիերին, որի կարծիքով հունական կուռքերի Հայաստան բերվելը ոչ թե իրական ինչ-որ մի դեպքի է համապատասխանում, այլ արդյունք է Խորենացու խորհրդածող երևակայության[13]: Մերժելով Ա. Կարիերին, նա նման կարծիքը ոչ միայն համարում էր վիճելի, այլև գտնում էր, որ Ագաթանգեղոսի և Խորենացու վկայությունների համաձայն, հիշյալ աստվածների (Դիոս, Արտեմիդե, Աթենաս և Հեփեստոս) արձանները գտնվել են Անի-Կամախում, Երեղում, Թիլում և Բագառիճում, իսկ այդ տարածքները՝ ըստ Յ. Մարքվարթի և նրա, Միհրդատյան պատերազմների ժամանակ դեռ չէին միացվել Մեծ Հայքի թագավորությանը և մտնում էին Պոնտական թագավորության մեջ: Հետևաբար, եզրակացնում է մեծանուն հայագետը, միանգամայն հավանական է, որ այդ արձանները կարող էին բերված լինել Հունաստանից Միհրդատյան Առաջին պատերազմի ժամանակ:

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրողները միասնական են այն խնդրում, որ Պատմահոր հաղորդման մեջ հիմնական իրադարձությունները վերաբերում են Պոնտոսի թագավորության Միհրդատյան Առաջին պատերազմում ունեցած հաջողություններին և Միհրդատ VI Եվպատորի Բոսպորյան թագավորությունում իր կյանքի վերջին օրերին ունեցած գործունեությանն ու իր դեմ բռնկված ապստամբության հետևանքով ինքնասպանություն գործելուն, որը հետագայում ընկալվել է որպես իր զորքերի կողմից սպանություն: Հիշյալին միախառնվել են Կրեսոսի ժամանակների իրադարձությունները, որոնք աղերսվել են հայոց Արտաշես Աշխարհակալ թագավորի գործունեությանը: Եվ եթե, ինչպես դժվար չէր վերը համոզվել, հայերը՝ ի դեմս Քսերքսեսի և նրա որդի Արշեղի, մասնակցություն են ունեցել Կրեսոսի գերեվարմանը՝ պատճառ դառնալով Արտաշես թագավորի կողմից այդ գործողությունն իրականացնելու փաստի մեջտեղ գալուն, ապա այդ նաև նշանակում է, որ պետք է անպայման գոյություն ունենար մի ինչ-որ Արտաշես թագավոր, որը լիներ հայոց արքա և նրան վերագրվեին Քսերքսեսի և Արշեղի կատարած սխրագործությունները: Ըստ որում, ոչ միայն չի բացառվում, այլև միանգամայն տրամաբանական է, որ Պատմահոր երկում հիշված Արտաշեսն ունեցել է թերևս մեկ այլ անուն ևս, որը և առաջ է բերել թյուրիմացությունը:

Մեզ համար կասկածից վեր է, որ ուսումնասիրողներն իրավացի են այն խնդրում, թե Պատմահոր հաղորդման մեջ պատմվող իրադարձություններն առաջին հերթին վերաբերում են Միհրդատյան Առաջին պատերազմի ժամանակներին: Ուստի իրավացիորեն հարց է ծագում, թե Մովսես Խորենացին ինչպե՞ս կարող էր Միհրդատ VI-ին վերաբերող դեպքերը կապել հայոց Արտաշես թագավորի գործունեության հետ: Պատճառը, մեր կարծի-

---

[13] Ա. Կ ա ր ի ե ր. Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ համեմատ., թարգմ. Հ.Վ. Տաշյանի, Վիեննա, 1899, էջ 39: Տե՛ս նաև Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., հ. Ա, էջ 147:

քով, այն է, որ պոնտական թագավորն անպայման կրել է Արտաշես անունը և համարվել ինչ-ինչ պատճառներով հայոց արքա՝ պատճառ դառնալով, որ երբեմն միևնույն անունը կրող անձանց իրար հետ չվոթող Պատմահայրն իրեն հասած տեղեկությանը նմանօրինակ մեկնաբանություն տա: Իսկ թե դա ինչո՞ւ և ինչպե՞ս կարող էր տեղի ունենալ, մենք կփորձենք ստորև մեկնաբանել և բացատրություն տալ:

Հայտնի է, որ Միհրդատ VI Եվպատորը Պոնտոսի դահ բարձրացավ պաշտոնապես 121/120 թ. իր հոր՝ Միհրդատ V-ի սպանությունից հետո, որը կատարվեց նրա մերձավորների կազմակերպած դավադրության միջոցով[44], չնայած Յուստինն այն համարում է պարզապես վաղաժամ մահ[45]: Հենվելով Ապպիանոսի և Սալյուստիոսի հաղորդումների վրա, կարելի է ենթադրել, որ դավադիրների մեջ էր նրա կին Լաոդիկեան, որը սելևկյան Անտիոքոս Եպիփանես թագավորի դուստրն էր: Շատ հնարավոր է, որ դավադիրները գործում էին ունենալով Հռոմի դաղտնի աջակցությունը, ինչպես ենթադրում է Թ. Ռեյնախը,[46] սակայն Ֆ. Շտելինը մեծ կասկածանքով է վերաբերում նրա կողմից Միհրդատ V Եվերդետի կնոջը Անտիոքոս IV Եպիփանեսի դստեր հետ նույնացնելուն[47]: Չնայած կասկածներին և Լաոդիկեայի Անտիոքոս IV-ի դստեր հետ նույնացնելու կամ չնույնացնելու հանգամանքին, դավադրության մեջ հռոմեական կողմի ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը, մեր կարծիքով, շատ հավանական է:

Միհրդատ VI-ը դահ բարձրացավ, երբ ընդամենը 11 տարեկան էր[48]: Հոր կտակի համաձայն, թագավորի դեռահասության շրջանում երկիրը պետք է կառավարեր նրա մայր Լաոդիկեան: Չի բացառվում, որ վերջինս, լինելով իշխանատենչ ու վառասեր անձնավորություն, դավադրությանը մասնակցել էր իշխանությանը տիրելու նպատակով, ուստի այն պահից սկսած, երբ մանկահասակ Միհրդատ VI-ի մոտ ի հայտ եկան նրա ուժեղ բնավորության գծերը, մայրը փորձեց վերացնել որդուն և իշխանությունն ամբողջությամբ վերցնել իր ձեռքը[49]: Մոր մահափորձերը հետևում էին մեկը մյուսին և թագավորն ստիպված էր իր փոքրաթիվ կողմնակիցներով հեռանալ պալատից ու թաքնվել մոր վրեժխնդրությունից: Յոթ տարի ապրելով աստանդական կյանքով, որի մասին տարբեր զրույցներ են հյուսվել, ըստ պատմիչների, նա վերադառնում է պալատ, տիրանում հոր դահին և հաշվեհարդար տեսնում բոլոր նրանց հետ, ովքեր կամենում էին նրան ոչնչացնել: Նրա վրեժխնդրությունից չի խուսափում նաև մայրը, որը բանտ է նետվում ու այնուհետև սպանվում Միհրդատի հրամանով[50]:

Ինչպես վերը նշել ենք, ուսումնասիրողների կարծիքով, Միհրդատ VI-ի առջին քայլերից մեկը եղավ Փոքր Հայքի նվաճումը[51]: Այս եզրակացութ-

---

[44] S t r a b o, X, 4,10.

[45] J u s t i n, XXXVII, 1.

[46] T h . R e i n a c h. Նշվ. աշխ. էջ 41:

[47] F. S t a h l i n. Geschichte der kleinasiatischen Galater. Leipzig, 1907, S. 709. Տե՛ս նաև G e y e r. Mithridates, RE, 30. Hbb., p. 2163.

[48] A p p i a n., Mithr., 112.

[49] J u s t i n, XXXVIII, 7, 1. Eutrop., v, 2-3.

[50] A p p i a n. Mithr., 112.

[51] E d . M e y e r. Նշվ. աշխ., էջ 87:

յունը, որ հիմնված է Ստրաբոնի այն հաղորդման վրա, թե «երբ Միհրդատ Եվպատորը զորացավ, տիրեց Կողքիսին և այն բոլոր երկրներին, որոնց իշխանությունը Սիսիսի որդի Անտիպատրոսը հանձնեց նրան: Միհրդատը հոգ տարավ այս երկրների մասին և չինեց նրանց մեջ 75 ամրոց պահելու համար իր գանձերի մեծագույն մասը: Սրանցից ամենից ավելի արժանի են հիշատակության Հյուդարան, Բասգոյդարիզան և Սինորիան, որ գտնվում է Մեծ Հայաստանի սահմանում. սրա համար էլ Թեոփանեսը վերակոչել է այն Սյունորիա: Պարիադրեսի ամբողջ այս լեռնոտ շրջանը հարմարավոր էր լինելով ջրառատ, անտառաշատ և անդունդներով սեպացած ու վիհերով բաժանված ամեն կողմից, ուստի այնտեղ կառուցեց մեծագույն մասն իր գանձատների, և վերջումն էլ Միհրդատը Պոմպեոսի արշավանքին ապաստանեց այստեղ, Պոնտական թագավորության այս ծայրամասը, և Եկեղիքում Դաստեյրայի մոտ գրավելով մի ջրառատ լեռ (սրան մոտիկ է Եփրատը), որ բաժանում է Եկեղիքը Փոքր Հայքից, մնաց այնտեղ, մինչև որ պաշարվելով ստիպված փախավ լեռներով Կողքիս և այնտեղից էլ Բոսպոր: Պոմպեոսը նույն տեղի մոտ չինեց Փոքր Հայքում Նիկոպոլիս քաղաքը, որ այժմ էլ կա և լավ բնակված է»[52]: Ըստ մեզ, Հր. Աճառյանի կողմից կատարված թարգմանության մեջ ճիշտ է ընկալված հաղորդման էությունը և Միհրդատ VI-ի կողմից իշխանության հաստատումը Փոքր Հայքում մատուցվում է որպես վերջինիս հանձնում պոնտական թագավորին Փոքր Հայքի թագավոր Անտիպատրոսի կողմից, որը Սիսիսի որդին էր: Որ, իրոք, խոսք անգամ չէր կարող լինել նվաճման մասին, հավաստում են հիշյալ հաղորդման մյուս մանրամասները: Պոնտական թագավորը ոչ միայն Փոքր Հայքի հետ չի վարվում որպես նվաճված երկրի, այլև հոգ է տանում նրան և իրեն խիստ ապահով ու անվտանգ զգալով, այստեղ է պահում գանձերի մեծագույն մասը և կառուցում է 75 ամրոց: Հաղիվ թե Միհրդատը, նվաճելով Փոքր Հայքը և առաջ բերելով տեղացիների թշնամանքը, իրեն այնքան ապահով զգար այնտեղ, որ Փոքր Հայքում կառուցեր իր գանձատների մեծագույն մասը և վերջում էլ, իր անհաջողությունների շրջանում, ապաստան փնտրեր այդ կողմերում: Դժվար չէ տեսնել, որ Միհրդատի համար Փոքր Հայքն առավել քան սոսկ բարեկամական երկիր է: Հետևաբար կա մի ինչ-որ մեզ անհայտ իրադարձություն, որի մասին սկզբնաղբյուրները տեղեկություններ չեն պահպանել, սակայն որի գոյությունը կռահելի է հենց Ստրաբոնի վերը բերված հաղորդումից: Մերժելով Գ. Ա. Ստրատանովսկու թարգմանությունը, որով Փոքր Հայքում Միհրդատ VI-ի իշխանության հաստատումն ընկալվում է որպես Սիսիսի որդի Անտիպատրոսի կողմից հիշյալ երկրի զիջում,*[53] *այլ խոսքով, նվաճման արտահայտություն, մենք կարծում ենք, որ դեպքերի իրական պատկերը մի փոքր, եթե չասենք միանգամայն այլ է եղել: Ինչպես վերը, վերլուծելով Ստրաբոնի հաղորդումը, ցույց տվեցինք, որ դրանից բոլորովին*

---

[52] S t r a b o, XII, 3,28, *տե՛ս Ս տ ր ա բ ո ն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 75, 77:*

[53] С т р а б о н. География в 17 книгах, перевод, статья и комментарии Г.А. Стратановского, Л., 1964, XII, 3, 28 ("Митридат Евпатор стал владыкой Колхиды и всех этих стран, уступленных ему Антипатром, сыном Сисиды").

չի բխում, թե Փոքր Հայքը նվաճված երկիր է, այդպես էլ այդ միտքը կարելի է հաստատել Կողքիսի օրինակով, որը ընավ նման հոգատարության չի արժանանում: Ավելին, եթե Կողքիսն ապստամբում է պոնտական թագավորի դեմ պահանջելով իրեն թագավոր տալ ի դեմս Միհրդատ VI-ի որդու, ապա Փոքր Հայքը պահպանում է իր հավատարմությունը նրան մինչև վերջին պահը: Պոնտական թագավորը ոչ միայն Փոքր Հայքում իրեն վստահ է զգացել, այլև առնվազն ընդունելի գահակալ է համարվել: Հետևաբար տեղին է ենթադրել, որ Փոքր Հայքի թագավորությունը Միհրդատ VI-ին է անցել խաղաղ ճանապարհով և այնպիսի իրավական կացությամբ, որը նրա բնակիչների շրջանում ոչ միայն դժգոհություն առաջ չի բերել, այլև բարեկամական հարաբերություններ է ստեղծել թագավորի և հայերի միջև: Միակ հավանական ենթադրությունը, որը, մեր կարծիքով, հաստատվում է մի քանի այլ անուղղակի տեղեկություններով, այն է, որ Սիսիսի կամ ավելի շուտ Սիսի որդի Անտիպատրոսը եղել է անժառանգ և Փոքր Հայքը նրա կողմից որպես ժառանգություն հանձնվել է Միհրդատ VI-ին: Ըստ որում, կա մի շատ կարևոր հանգամանք, որը զարմանալիորեն դուրս է մնացել Ստրաբոնի ուշադրությունից: Այդ ինչպե՞ս է հաջողվել իշխանությունից փաստորեն զրկված և աստանդական կացության մեջ հայտնված երիտասարդ Միհրդատ VI-ին վերահաստատվել պոնտական գահին: Այդ ո՞ր ուժերն են, որ սատար են կանգնել երիտասարդ գահակալին արքունական իշխանությունը ետ վերադարձնելու հարցում: Միայն զարմանալ կարելի է, թե ինչպես առանց բավարար ուժերի, արքունական գահանիստ հայտնված Միհրդատը տեղն ու տեղը չի ձերբակալվել մոր կողմից ու ենթարկվել մահապատժի: Եվ եթե նրա մորն այդ չէր հաջողվել իրականացնել որդու փախուստի և թաքնվելու պատճառով, ապա ի՞նչն էր, որ նրան խանդարեց իրականացնել Միհրդատ VI-ի վերադարձի պարագայում: Մեր կարծիքով, միակ և շատ հավանական ենթադրությունն այն է, որ երիտասարդ Միհրդատը՝ աշխատելով մի կերպ փրկվել մոր հետապնդումից, գալիս է Փոքր Հայք, որի անժառանգ Անտիպատրոս թագավորը տեսնելով նրա տաղանդն ու բազում ունակությունները, որոշում է նրան որդեգրել, որի արդյունքում թագավորությունը ժառանգություն է մնում որդեգրին: Սակայն որդեգրությունը և գահ բարձրանալը հայերի շրջանում, ինչպես հավաստում է Տակիտոսը, ուղեկցվում էր անվանափոխությամբ: Այսպես, լատին հեղինակի խոսքերով, «այդ ժամանակաշրջանում Վոնոնին հեռացնելուց հետո (հայերը – Հ. Բ.) թագավոր չունեին, սակայն ժողովրդի տրամադրությունը հակվում էր դեպի Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդի՝ Զենոնը, որովհետև հենց մանկությունից նա կրթվել էր Հայերի սովորույթներով ու կենցաղով. որսագնացության, խրախճանքների և բարբարոսների մոտ հաճախ դործադրվող այլ սովորությունների միջոցով նա իրեն հետ էր կապել թե՛ ազնվականներին և թե՛ հասարակ ժողովրդին: Այդպիսով Գերմանիկոսն Արտաքսատա (իմա՛ Արտաշատ – Հ. Բ.) քաղաքում մեծամեծների հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ՝ նրա գլխին դրեց թագավորական զարդանշանը: Մնացածները, հարգանք մատուցելով թագավորին, ողջունում էին Արտաշես

անվանելով: Այսպես կոչեցին նրան քաղաքի անվան օրինակով»[51]: Անշուշտ, Զենոնին հայերը Արտաշես կոչեցին ոչ թե Արտաշատ քաղաքի անունով, ինչպես սխալմամբ կարծում է պատմիչը, այլ նրան ավեցին հայոց թագավորական հարստության տոհմական ամենատարածված անունը, որը պայմանավորված էր հայոց սովորութային իրավունքով: Որ այդպիսի ավանդական կարգ կար Հայաստանում, կարելի է համոզվել նաև Պատմահոր երկի շարադրանքից, որտեղ հայոց Տրդատ I թագավորը հանդես է գալիս միայն Արտաշես անունով, իսկ նրա դարաշրջանի և նրա անձի հետ կապված իրադարձությունները միահյուսվել են Արտաշես I-ի և այլ Արտաշեսների գործունեության հետ,[55] որտեղ Մեծ Հայքում գահակալած Սոհեմոսը հայ իրականությանը հայտնի է Տիգրան անունով[56]: Անհրաժեշտության դեպքում այս ցանկը կարելի է շարունակել, սակայն բերված օրինակներն էլ բավական են ցույց տալու համար, որ օտարազգի գահակալի համար անվանակոչությունը գահ բարձրանալիս պարտադիր էր: Կարծում ենք, որ, հիմք ունենալով այս իրողությունը, կարելի է վստահաբար ասել, որ Միհրդատը որդեգրվել է, թերևս արդեն Անտիպատրոսի կենդանության օրոք թագադրվել որպես հայոց թագավոր և հայերը նրան գահ բարձրանալիս տվել են Արտաշես անունը: Այս դեպքում նաև լրիվ հասկանալի է դառնում, թե ինչու Եվտրոպիոս պատմիչը Միհրդատին համարում է Պոնտոսի և Հայաստանի թագավոր, իսկ թե ինչու նա էլ արտակարգ հոգատար է Փոքր Հայքի նկատմամբ: Եթե ամբողջությամբ վստահենք Ստրաբոնի հաղորդման ճշտությանը, ապա պետք է եզրակացնենք, որ Միհրդատը տիրել է Փոքր Հայքին Պոնտոսում գահ բարձրանալուց հետո, սակայն այն իրողությունը, որ Պատմահայրը նրան կոչում է Արտաշես անունով, բացառում է դրա հնարավորությունը: Ամեն ինչից ելնելով, նա սկզբում պետք է թագավորեր Փոքր Հայքում և հետագայում օգտագործելով իր հայկական թագավորության ուժերը, կարողանար տիրել իր հայրենի թագավորությանը: Փոքր Հայքի ռազմական ուժերն էին, որ, ամենայն հավանականությամբ, նրան հնարավորություն տվեցին վերադառնալու Պոնտոս և, չնայած մոր և նրա կուսակիցների դիմադրությանը, թագավորել Պոնտոսում: Այլ խոսքով, մի որոշ ժամանակ նա հանդես է եկել միայն որպես հայոց թագավոր և այն էլ միայն Արտաշես անունով: Այս վիճակը, որ Միհրդատ-Արտաշեսը եղել է հայոց թագավոր և կռվել է Հռոմի դեմ, սկզբնաղբյուրներում կարող էր մի դեպքում արտացոլվել որպես հայոց թագավորի գործունեություն կամ Արտաշես թագավորի գործունեություն, իսկ մյուս և ավելի շատ դեպքերում իրապես կապվեր միայն Միհրդատի անվան հետ: Հայոց Պատմահայրը, որ այսպիսի դեպքերում, որպես կանոն, դրսևորելով իր հայրենասիրությունը և իր հայրենիքի գործիչների մեծա-

---

[51] Կ. Տ ա կ ի տ ո ս, քաղեց և լատիներենից թարգմանեց պրոֆ. պաշտ. Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941, էջ 14-15:

[55] Ա. Մ. Գ ա ր ա գ ա շ յ ա ն. Քննական պատմութիւն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 242-244: Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նշվ. աշխ., հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 12-14:

[56] Մ. Զ ա մ չ յ ա ն. Պատմութիւն Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 355-357: К. К о с т а н я н ц. История Армении. М., 1911, с. 42. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նշվ. աշխ., հ. Բ, մասն Ա, էջ 46-48:

գործություններով հպարտանալը, առավելությունը տալիս էր հայ թագավորներին ու գործիչներին, դերադասություն է տվել այն աղբյուրներին, որտեղ հիշյալ դեպքերը վերագրված էին հայոց Արտաշես թագավորին, որը, սակայն, իրականում Միհրդատ VI Եվպատորն էր: Մեր կարծիքով, միայն այսպես կարող է ընկալվել ու մեկնաբանվել Մովսես Խորենացու հաղորդումը հայոց Արտաշես Աշխարհակալ թագավորի հիշյալ գործունեության մասին:

Անշուշտ, այստեղ կարելի էր վերջակետ դնել և ավարտել ուսումնասիրությունը, սակայն կա երկու խնդիր, որոնք չհիշատակել չի կարելի: Իրականությունն այն է, որ Պատմահոր Արտաշես Աշխարհակալը բարդ կերպար է: Այն ոչ միայն արտացոլում է հայոց Արտաշես անունը կրող մի քանի թագավորների և Միհրդատ VI Եվպատոր արքայի գործունեությունը, այլև՝ ամեն ինչից դատելով, տեղեկություններ է պարունակում նաև Տիգրան Մեծի վերաբերյալ, հանգամանք, որ մինչև օրս ղարմանալիորեն չի արժանացել պատմաբանների ուշադրությանը: Միհրդատ VI-ի և Տիգրան Մեծի կողմից Արտաշես անունը կրելը մեծասես նպաստել է, որ Միհրդատ-Արտաշեսի կատարած գործերը շփոթվեն Տիգրան Մեծ-Արտաշես Աշխարհակալի մեծագործությունների հետ և տեղ գտնեն Մովսես Խորենացու երկում: Այս վերին աստիճանի հետաքրքիր խնդիրը, որ, անտարակույս, առանձին քննության առարկա է և հնարավորություն է տալիս բացահայտելու հայոց մեծ աշխարհակալ թագավորի գործունեության որոշ նոր մանրամասներ, մենք թողնում ենք ապագային և մտագիր ենք հանդես դալ առանձին աշխատությամբ, սակայն երկրորդ խնդիրը անհրաժեշտ ենք համարում քննության առնել այժմ:

Ինչպես վերը նշել ենք, ուսումնասիրողների կարծիքով հելլենական աստվածների արձանները բերվել են Անի ամրոց Միհրդատյան Առաջին պատերազմի ժամանակ: Ըստ որում, քանի որ արձանները բերվել են Միհրդատ Եվպատորի կողմից, ապա հիշյալ տարածքները նշված ժամանակներում դեռ չէին կցվել Մեծ Հայքի թագավորությանը և մտնում էին Պոնտոսի մեջ: Այս տեսակետը տրամաբանական առումով այնքան կուռ է թվում, որ Ս. Տ. Երեմյանն իր կազմած պատմական քարտեզներում Ակիլիսենե-Եկեղիքի տարածքը մտցրել է Պոնտական թագավորության մեջ, առանձնապես ուշադրություն չդարձնելով Ստրաբոնի այն հետաքրքիր տեղեկությանը, թե «...Արմենոսի հետ եղողները բնակվեցին Ակիլիսենեում (որ նախապես ենթակա էր Ծոփքին), ...»[57]: Հույն աշխարհագրագետի նշված հաղորդումը, որի իսկությունը հազիվ թե համարձակվի կասկածի տակ առնել որևէ ուսումնասիրող, մեր առջև մի շարք բարդ խնդիրներ է դնում: Այսպես, եթե Ակիլիսենեն նախապես Ծոփքի մեջ էր, ապա տրամաբանական է ենթադրել, թե այն արդեն մ.թ.ա. 94 թ. Ծոփքի թագավորության հետ մեկտեղ միացվել էր Մեծ Հայքի թագավորությանը: Եզրակացությունը, որ միանգամայն հուսալի է և տրամաբանական, հակասության մեջ է այն հետազոտողների տեսակետներին, ըստ որի Ակիլիսենեն Միհրդատ VI-ի գահակալության շրջանում պատկանել է Պոնտոսին և միացվել

[57] S t r a b o, XI, 14.12.

է Մեծ Հայքի թագավորությանը միայն մ.թ.ա. 66 թ. Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրով: Կարծում ենք, որ եզրակացությունների այս ծաղկարույլում կարելի է մի փոքր սրբագրում կատարել: Նախ և առաջ, կարելի է կասկածի տակ առնել այն կարծիքը, որ Ակիլլիսենե-Եկեղիքը մինչև մ.թ.ա. 66 թ. Մեծ Հայքի թագավորության մաս չի կազմել և, որ այդ է վկայում Ստրաբոնի հաղորդումը կապված Ակիլլիսենեի Ծոփքի մաս կազմելու հետ: Կարծես թե դրան խանգարում է Կղավդիոս Պտղոմեոսի կողմից Փոքր Հայքում Կալտիորիսսա բնակավայրի հիշատակությունը[58], որը կարող է նույնացվել Խաղտոյառիճի հետ: Սակայն նշված բնակավայրի կոորդինատները, մասնավորապես ոչ հեռու գտնվելը Նիկոպոլսից և Սատաղից, այդ նույնությունը դարձնում են պարզապես անհնարին: Մյուս կողմից Իրեսսոս բնակավայրը, որ հեշտությամբ սրբագրելի է Երեսսոս և նույնական է Երեզ ավանին, Պտղոմեոսը հիշում է մեծ Հայքում[59], ընդհանրապես Երեզից դեպի արևելք գտնվող Խաղտոյառիճը անվերապահորեն պետք է գտնվեր Մեծ Հայքում: Եթե Ակիլլիսենեն մտել է Մեծ Հայքի մեջ, ապա հունական ասավածների արձանները կարող էին բերվել Մեծ Հայքի թագավորություն Միհրդատ VI Արտաշեսի կամ Տիգրան Մեծ-Արտաշես Աշխարհակալի կողմից: Տիգրան Մեծն այդ կարող էր կատարել արդեն մ.թ.ա. 93 թ. Կապադովկիա կատարած արշավանքից հետո, իսկ Միհրդատ VI-ը երկու երկրների միջև կնքված փոխօգնության պայմանագրի համաձայն, կարող էր ավարի մաս հանդիսացող նշված արձանների մի մասը հանձնել իր դաշնակից երկրին: Այլ խոսքով, եթե Արտաշատի պայմանագրով Տիգրան Մեծը Պոմպեոսից ստացավ Փոքր Հայքի մի մասը, ապա այն զբաղեցնում էր միայն Ճորոխ գետի ավազանի արևմտյան հատվածը, իսկ Ակիլլիսենե-Եկեղիքը, Դերջանը հարակից տարածքներով մինչ այդ էլ մաս չէին կազմում Մեծ Հայքի[60]:

Ամփոփենք: Ի մի բերելով վերը կատարված քննության արդյունքները, մենք գալիս ենք այն հիմնավոր եզրակացության, որ Միհրդատ VI-ը սկզբնապես թագավոր է հռչակվել Փոքր Հայքում ստանալով հայոց արքայատոհմիկ Արտաշես անունը, մի որոշ ժամանակ թագավորել է որպես Արտաշես արքա, մինչև որ կարողացել է հաստատվել հայրենի գահին և տիրել Պոնտոսի թագավորությանը: Նշված պատճառով հայ ժողովրդի պատմական հիշողությունը նրան համարել է հայոց թագավոր, իսկ կատարած մեծագործություններն էլ հայոց Արտաշես թագավորի գործունեությունն, որը և ի երջանկություն մեզ, Պատմահայրը առանց մանրամասների մեջ խորանալու և ազդվելով նաև այն լուրությունից, որ Տիգրան Մեծը ևս կրել է Արտաշես անունը, արտացոլել է իր հանճարեղ երկում:

---

[58] Claudii Ptolomaei Geographia, գիրք V, գլ. 6, 20:

[59] Նույն տեղում, գ. V, գլ. 12, 5:

[60] Ստրաբոնի տեղեկությունը Միհրդատ VI-ի կողմից Փոքր Հայքում 75 ամրոցներ կառուցելու և գանձերի մեծագույն մասն այնտեղ պահելու մասին վերաբերում է միայն Ճորոխի ավազանի արևմտյան հատվածին: Պատինգերյան քարտեզի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սինորա ամրոցը գտնվել է Արևմտյան Եփրատ և Ճորոխ գետերի ջրաժանից հյուսիս, իսկ Արտաշատից Սատաղ գնացող ճանապարհը հարել է Սինորան ու Խաղտոյառիճն իրարից բաժանող Սկյութական կոչված լեռները:

ЦАРЬ ПОНТА МИТРИДАТ VI ЕВПАТОР БЫЛ ТАКЖЕ И ЦАРЕМ АРМЯНСКИМ

БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

Изучение труда Мовсеса Хоренаци и ряда других первоисточников показывает, что деятельность знаменитого понтийского царя Митридата VI Евпатора, в частности, описание его известного похода в страны Малой Азии и Грецию с целью приостановить экспансию римлян и создать великую эллинистическую державу приписывается армянскому царю Арташесу. На основе сравнительного анализа имеющихся данных и сообщений автор приходит к выводу, что причиной появления такого, на первый взгляд, не имеющего с реальной историей ничего общего описания обусловлено тем, что Митридат VI Евпатор в годы своих скитаний бежит в Малую Азию, усыновляется ее бездетным царем Антипатром, провозглашается царем Малой Армении, приняв, согласно армянской традиции, династическое имя Арташес. С помощью войск Малой Армении Митридату VI удалось утвердиться также на родном понтийском троне, вследствие чего он иногда назывался царем Понта и Армении.

THE KING OF PONTUS MITHRIDATES VI EUPATOR WAS ALSO THE KING OF ARMENIA

BABKEN HARUTYUNYAN

Summary

The study of Movses Khorenatsi's work and various other sources shows that the acts of the famous Pontian king, Mithridates VI Eupator, have also been attributed to the Armenian king Artashes, particularly in the description of his well known march into the Hellenistic states of Asia Minor and Greece, which were intended to halt Roman expansion into the East, and to create a great Hellenistic realm. Based upon the comparative analysis of available data and reports, the author comes to the conclusion that the reason for the above mentioned connection between the two kings, appearing on the surface have no merit, are due to the flight of Mithridates VI Eupator to the Kingdom of Asia Minor his subsequent adoption by the childless king, Antipatres, his rise to the throne of Armenia Minor, and, in accordance with royal Armenian traditions, his acceptance of the Armenian dynastic name Artashes. With the aid of the army of Armenia Minor, Mithridates VI Eupator also ascended to the throne of his native Pontus explaining why he has been named the king of both Pontus and Armenia by ancient authors.